Ծրագրի օրինակելի ձևը հաստատված է
ՀՀ կառավարությանն առընթեր
պետական գույքի կառավարման վարչության պետի
2013 թվականի դեկտեմբերի 11-ի
N 100-Ն հրամանով
(հիմքը՝ ՀՀ կառավարության 17.02.2011թ. հ. 304-Ն որոշում)

Ծ Ր Ա Գ Ի Ր

«Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպություն

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 3-ԱՄՅԱ

ԵՐԵՎԱՆ 2018-2020թթ.

I. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպությունը հանդիսանում է «Ա.Դ. Սախարովի անվան առաջընթացի, մարդու իրավունքների պաշտպանության և գթասրտության ֆոնդի (հիմնադրամի)» իրավահաջորդը, որը ստեղծվել է 1990թ. օգոստոսի 28-ին, ֆոնդի հիմնադիր ժողովի որոշմամբ: Գրանցված է ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի 09.10.1990 թ. հ. 457 որոշմամբ:

Վերագրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կոլեգիայի 26.12.1997թ. հ. 50/2-3 որոշմամբ, վկայական հ. 414:

Վերագրանցված է ՀՀ արդարադատության նախարարության 21.01.2000թ. հ. 167 հրամանով, վկայական հ. 03Ա 072784, ներդիր հ. 001:

Նոր խմբագրությամբ Կանոնադրությունը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից 14.07.2006թ., գրանցման համար 211.171.04085:

Կանոնադրության հ. 001-2 փոփոխությունը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից 08.12.2017թ.:

Կազմակերպության պետական գրանցման վկայական հ. 03Ա 072784, ներդիր հ. 002, հարկ վճարողի հաշվառման համար՝ 02513655:

«Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպությունը ունի երեք ստորաբաժանումներ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում:

1.1. Կազմակերպության առարկան, նպատակները և խնդիրները

«Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպության գործունեության **առարկան** է՝ Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունն ու ժողովրդավարական համակարգի զարգացման խթանումը:

«Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպության գործունեության **նպատակներն ու խնդիրներն են՝**

1) նպաստել մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ապահովմանը,
2) նպաստել քաղաքացիական հասարակության կառույցների կարողությունների հզորացմանը,
3) նպաստել որոշումների ընդունման և հանրային կառավարման վերահսկողության գործընթացներին հասարակության մասնակցության ապահովմանը,
4) նպաստել բնակչության իրավագիտակցության, իրավական մշակույթի և ընկալման մակարդակի բարձրացմանը,
5) ցուցաբերել անվճար իրավաբանական ծառայություններ,
6) աջակցել հանրապետությունում արդար ու թափանցիկ ընտրությունների անցկացմանը և ընտրական ինստիտուտի կայացմանը, այդ նպատակով իրականացնել ընտրությունների և հանրաքվեների նկատմամբ հասարակական վերահսկողության, այդ թվում՝ դիտորդական առաքելություն,
7) իրականացնել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության և նրանց կողմից իրականացվող ծրագրերի, ինչպես նաև հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրթամշակութային, բնապահպանական ոլորտներում ուսումնասիրություններ, մշտադիտարկում և գնահատում,
8) մասնակցել Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ օրենքների և այլ իրավական ակտերի ստեղծման աշխատանքներին և հանրային քննարկումներին,
9) իր նպատակների իրականացման համար կազմակերպությունը կարող է իրականացնել նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն:

«Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպությունն իր կանոնադրական նպատակների արդյունավետ իրականացման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է կազմակերպել և անցկացնել սեմինարներ, դասընթացներ, կլոր սեղաններ, ֆորումներ, համաժողովներ և հանրային քննարկումներ, ինչպես նաև իր կանոնադրական նպատակներից բխող առաջարկություններ ներկայացնել Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին:

Իր նպատակներն իրականացնելու համար կազմակերպությունը համագործակցում է ինչպես Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, Հայաստանի Հանրապետությունում գրանցված կազմակերպությունների, այնպես էլ միջազգային կամ օտարերկրյա կազմակերպությունների և անհատների հետ:

Կազմակերպությունն իրավունք ունի իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինել իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծել առևտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակից: Կազմակերպության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացված շահույթն օգտագործվում է միայն կազմակերպության կանոնադրական նպատակների իրականացման համար:

1.2. Կազմակերպության գործունեության իրավական հիմքերը

«Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքով, «Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպության կանոնադրությամբ և այլ օրենքներով և իրավական ակտերով:

«Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպության աշխատողների միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1.3. **Կազմակերպությունում առկա մարդկային ռեսուրսներն են.**

1. Լևոն Կոնստանտինի Ներսիսյան, գործադիր տնօրեն
2. Սեյրան Գուրգենի Մարտիրոսյան, Շիրակի մասնաճյուղի ղեկավար
3. Լուսինե Սարգսի Թոփլաղալցյան, Գեղարքունիքի մասնաճյուղի ղեկավար
4. Անդրանիկ Գերասիմի Հարությունյան, Սյունիքի մասնաճյուղի ղեկավար

(ղեկավար կազմի անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն)

1. Ծաղիկ Ազատի Մուրադյան, հաշվապահ
2. Ռուզաննա Հարությունի Ավագյան, տնօրենի օգնական
3. Մերի Ռուբենի Խաչատրյան, իրավաբան
4. Ինեսա Շահենի Բալուղյան, ցանցային ադմինիստրատոր
5. Արմեն Մերուժանի Պետրոսյան, Շիրակի մասնաճյուղի ղեկավարի օգնական
6. Վանուհի Արտաշեսի Գասպարյան, իրավաբան
7. Հերմինե Հենրիկի Հովհաննիսյան, իրավաբան
8. Լուիզա Արթուրի Զաքեյան, գործավար
9. Օֆելյա Էմիլի Գալստյան, թարգմանիչ
10. Ալեքսանդր Գարեգինի Եղոյան, տեխնիկական աշխատող
11. Ռուբեն Գագիկի Խաչիկյան, Գեղարքունիքի մասնաճյուղի ղեկավար օգնական
12. Մանուշ Թադևոսի Նալբանդյան, իրավաբան
13. Համլետ Ադունց Գառնիկի, Սյունիքի մասնաճյուղի ղեկավարի օգնական
14. Աշոտ Բահադուրի Ասրյան, իրավաբան
15. Հովիկ Ռազմիկի Հովհաննիսյան, իրավաբան
16. Հերմինե Սեյրանի Հակոբջանյան, իրավաբանի օգնական

(մշտական աշխատողների անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն)

1. Գևորգ Ռոբերտի Պետրոսյան, անասնաբույժ, բնապահպան
2. Ալեքսանդր Սամվելի Մարտիրոսյան, մեդիա փորձագետ
3. Հասմիկ Աշոտի Խաչատրյան, ինժեներ
4. Սիլվա Ռուբենի Խաչիկյան, ֆինանսիստ
5. Արթուր Արամի Նիկողոսյան, պատմաբան
6. Էլմիրա Հայրապետի Փանոսյան, մանկավարժ
7. Արարատ Վարուժանի Հարությունյան, տնտեսագետ
8. Գայանե Արամայիսի Հարությունյան, քիմիկոս
9. Նունե Նիկոլայի Ավետիսյան, ֆիզիկ-մանկավարժ
10. Մարիամ Վարդանի Մնացականյան, տնտեսագետ
11. Լևոն Ալբերտի Բարսեղյան, լրագրող

Եվ այլ անկախ փորձագետներ ու մասնագետներ, որոնք մասնակցում են ծրագրի իրականացմանը կամավոր հիմունքներով կամ քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա:

(ծրագրի իրականացման համար ներգրավված անձանց անուն, ազգանուն, հայրանուն,

մասնագիտացում)

(տեղեկատվություն ծրագրին մասնակցող այլ անձանց վերաբերյալ)

1.4. Կազմակերպության գործունեության ոլորտը

«Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպության գործունեության ոլորտներն են՝

1. Մարդու իրավունքներ (սոցիալական, աշխատանքային, կրթական, առողջապահական և այլն),
2. Երեխաների իրավունքներ,
3. Փախստականների, քաղաքացիություն չունեցող անձանց և օտարերկրացիների իրավունքներ,
4. Շրջակա միջավայր,
5. Հանրային կառավարում և քաղաքականություն
6. Տեղական ինքնակառավարման մարմիններ
7. Եվ այլն:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

2.1. Ծրագրի նպատակը

Սույն ծրագրի իրականացման համար հիմք է հանդիսացել՝

1. «Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպության կանոնադրական նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև Brot für die Welt գերմանական կազմակերպության հետ կնքված դրամաշնորհային ծրագիրը (դրամաշնորհ N-ARM-2017-0379 «Քաղաքացիական հասարակության հզորացումը Հայաստանի Հանրապետության մարզերում» ծրագիրը (2018-2020թթ.):

Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպությունն արդեն 9 տարի է Brot für die Welt գերմանական կազմակերպության գործընկերն է:

2. _---_____,
3. _---_____:

Եթե ծրագրի իրականացման համար հիմք է հանդիսացել որևէ իրավական ակտ, ապա անհրաժեշտ է նշել իրավական ակտի անվանումը, համարը, տարեթիվը և ընդունող մարմինը: Համայնքի կողմից իրականացվող ծրագրի դեպքում անհրաժեշտ է նշել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատվող մարզի զարգացման սոցիալ-տնտեսական գործող ծրագրի հետ առնչությունը:

2.2. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական աղբյուրները

Սույն ծրագրի շրջանակներում «Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպության գործունեության կազմակերպման ֆինանսական աղբյուրն է հանդիսանում.

1. Brot für die Welt գերմանական կազմակերպության դրամաշնորհը.

(նշել ֆինանսավորող կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի անուն, ազգանուն, հայրանուն և ֆինանսավորման չափը՝ ըստ տարիների)

2. Յուրաքանչյուր տարվա համար 125.000 /հարյուր քսանհինգ հազար/ եվրոյին

համարժեք ՀՀ դրամ: Դրամաշնորհի ընդհանուր գումարը կազմում է 375,000 /երեք հարյուր յոթանասունհինգ հազար/ եվրոյին համարժեք ՀՀ դրամ:

2.3. Ծրագրի իրականացման ժամկետները՝

Սույն ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2018թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը, որն արդեն իսկ սկսել ենք իրականացնել:

2.4. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները՝

Սույն ծրագրի շրջանակներում առաջիկա երեք տարիներին՝ «Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպությունը նախատեսում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1-ին տարվա ընթացքում՝

Իրավաբանական ծառայություններ սոցիալապես անապահով և խոցելի խմբերի անձանց
Քաղաքացիական հասարակության դպրոցի գործունեության շարունակում
ՀՀ մարզերում ռեսուրս կենտրոնների գործունեության ընդլայնում
Ենթադրամաշնորհային ծրագրերի տրամադրում և վերահսկողություն
Մոնիտորինգի անցկացում հանրային և տեղական տարբեր ոլորտներում
Դիտորդական առաքելության իրականացում
Մասնակցություն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ օրենքների և այլ իրավական ակտերի ստեղծման աշխատանքներին և հանրային քննարկումներին:

_____,

(նշել միջոցառման(ների) անվանումը)

2-րդ տարվա ընթացքում՝ Վերոնշյալ միջոցառումների շարունակություն

_____,

(նշել միջոցառման(ների) անվանումը)

3-րդ տարվա ընթացքում՝ Վերոնշյալ միջոցառումների շարունակություն

Ծանոթություն՝ Յուրաքանչյուր տարվա ընթացքում երկու անգամ «Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպությունն անցնում է աուդիտ՝ «ԲԻ-ԴԻ-Օ ԱՐՄԵՆԻԱ» (BDO Armenia CJSC) ընկերության կողմից, որն ընտրվել է դրամաշնորհ տրամադրող Brot für die Welt գերմանական կազմակերպության կողմից: Իսկ ամբողջ ծրագրի ավարտից հետո՝ երրորդ տարում, Brot für die Welt գերմանական կազմակերպությունը «Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպությունում անցկացնում է նաև կազմակերպության գործունեության և ծրագրի իրականացման արտաքին գնահատման մոնիտորինգ: Բացի այդ, «Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպությունը յուրաքանչյուր տարվա մեջ երկու անգամ իր թեմատիկ հաշվետվությունները ներկայացնում է Brot für die Welt գերմանական կազմակերպությանը և հրապարակում իր կայքում:

2.5. Ծրագրի իրականացման ակնկալվող արդյունքը

Սույն ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է, որ «Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպությունը կապահովի.

1. Իրավախորհրդատվություն շուրջ 7000 շահառուների, որոնց թվում ֆիզիկական և իրավաբանական անձանց, քաղաքացիական հասարակության կառույցների, քաղաքացիական նախաձեռնությունների անդամներին, ներկայացուցիչներին, ինչի արդյունքում կբարձրացվի նաև այս քաղաքացիների իրավագիտակցության մակարդակը՝ իրենց իրավունքների ու հիմնարար ազատությունների վերաբերյալ:

2. Իրավաբանական աջակցություն շուրջ 2100 շահառուների՝ սոցիալապես խոցելի խմբերի ներկայացուցիչներին, փախստականներին, միգրանտներին, հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիների, որոնք գտնվում են Հայաստանի Հանրապետության տարածքում և կարիք ունեն իրավական պաշտպանության իրենց հուզող հարցերով:

3. Քաղաքացիական հասարակության դպրոցի շրջանակներում կազմակերպված դասընթացներին կմասնակցեն առնվազն 144 քաղաքացիական հասարակության և այլ կառույցների ներկայացուցիչներ, ավելի քան 1200 գյուղական համայնքների 400 անդամներ, որոնք կստանան համապատասխան տեսական և գործնական գիտելիքներ:

4. Մասնակցություն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ օրենքների և այլ իրավական ակտերի ստեղծման աշխատանքներին և հանրային քննարկումներին և լսումներին, ինչպես նաև դիտողությունների ու առաջարկությունների ներկայացում ՀՀ օրենսդիր և գործադիր մարմիններին (կապված տվյալ տարում շրջանառության մեջ գտնվող օրենքների նախագծերի քանակից և կարիքն առաջանելու դեպքում նոր առաջարկությունների ներկայացնելու գործող իրավական ակտերի վերաբերյալ): Գործող օրենքների և իրավական այլ ակտերի նախագծերի համար առաջարկվող փոփոխությունների մասին տեղեկացվածության բարձրացման, քննարկումների ու լոբբինգի համար անցկացվող հասարակական կարծիքի ձևավորման նպատակով շուրջ 250 միջոցառումներ (հասարակական քննարկումներ, սեմինար-պարապմունքներ, մեդիայում հրապարակումներ, գրավոր առաջարկություններ ՀՀ պատկան մարմիններին և այլն):

5. Առնվազն թվով 18 ենթադրամաշնորհային ծրագրերի իրականացում, տրամադրում այլ հասարակական կազմակերպություններին՝ հանրային վերահսկողության, մոնիտորինգի, շահերի պաշտպանության, ոչ պաշտոնական լոբբինգի և այլ ոլորտներում, ինչպես նաև թվով 12 երկարաժամկետ և կարճաժամկետ մոնիտորինգների իրականացում:

6. Ռեսուրս կենտրոնների կողմից կրթական, խորհրդատվական, տեղեկատվական և տեխնիկական ծառայությունների անվճար մատուցում քաղաքացիական հասարակության կառույցներին, այդ թվում նաև այլ հասարակական կազմակերպություններին, քաղաքացիական նախաձեռնություններին, կամավորներին: Այս ամենը կդառնա համակողմանի հանդիպումների, քննարկումների և երկխոսությունների հարթակ: Շուրջ 5000 շահառու և կամավոր կօգտվի նաև Կենտրոնի ռեսուրս կենտրոնների ծառայություններից:

(նշել ծրագրի չափելի արդյունքները, շահառուների թիվը, մյուս անհրաժեշտ տեղեկությունները):